Հ. Ս. ՄԵԼԻՔՅԱՆ

ՍԱՐԻՂԱՄԻՇԻ ԿԱՅԱԶՈՐԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1917 թ. Սարիղամիշը կովկասյան հեղափոխական շարժման առաջնակարգ կենտրոններից մեկն էր։ Ալեքսանդրապոլի և Կարսի հետ մեկտեղ այն կարևորագույն ռազմա-ստրատեգիական հանգույց էր, որը թիկունքը կապում էր կովկասյան ընդարձակ ռազմաճակատի հետ։ Սարիղամիշում ու նրա շրջանում 1917 թ. կենտրոնացված էին տասնյակ հազարավոր զինվորներ։ Կային նաև մի քանի հարյուր երկաթուղային և այլ բանվորներ։ Դա էլ հենց այն հիմնական բազան էր, ուր իրենց գործունեությունն էին ծավալում բոլշևիկները ականավոր հեղափոխական Ստեփան Ալավերդյանի ղեկավարությամբ[1]։

Փետրվարյան հեղափոխությունից հետո բոլշևիկները եռանդուն գործունեությամբ, քայլ առ քայլ, էսեռների, դաշնակների և մենշևիկների ազդեցությունից պոկում էին զինվորներին ու աշխատավորներին, նրանց նախապատրաստում սոցիալիստական հեղափոխության համար մղվող պայքարին։

Սարիղամիշի բոլշևիկների գործունեության պսակը հանդիսացավ այն, որ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո բոլշևիկներին պաշտպանող տասնյակ հազարավոր զինվորների աջակցությամբ այնտեղ հռչակվեց սովետական իշխանություն, որը վճռական պայքարի դրոշ պարզեց ընդդեմ անդրկովկասյան հակահեղափոխության։ Այդ հաղթանակը ձեռք բերվեց բոլշևիկների տևական ու համառ ջանքերի շնորհիվ։ Սարիղամիշում ևս մասսաների բոլշևիկացման դժվարին պրոցեսը համընկնում էր հեղափոխության զարգացման բեկումնային էտապների, մասնավորապես հունիսյան հարձակման ու կոռնիլովշչինայի հետ, երբ օբյեկտիվորեն ստեղծված բարենպաստ իրադրության պայմաններում բոլշևիկները մաքսիմում հնարավորությամբ ծավալեցին իրենց ազատագրական միսիան։

Ներկա հոդվածում մենք փորձել ենք քննարկել Սարիղամիշում մասսաների բոլշևիկացման հակասություններով ու դժվարություններով լի ճանապարհի էտապներից մեկի՝ կոռնիլովյան խռովության ժամանակաշրջանի հարցերը, ժամանակաշրջան, որն անմիջականորեն նախորդեց Հոկտեմբերի հաղթանակին։

Կոռնիլովյան խռովությունը, հեղափոխության դեմ ռուսական ռեակցիայի միապետական-դեներալական այդ դավադրությունը, այստեղ ևս ընդունվեց մեծագույն զայրույթով։

Օգոստոսի 30-ին տեղի ունեցավ Սարիղամիշի բազմահազարանոց կայազորի տարբեր զորամասերի բանակային կոմիտեների և զինվորների ու բանվորների պատգամավորների սովետի միացյալ նիստը, որը քննարկեց կոռնի-

---

1 *Սեպտեմբերին Սարիղամիշի բոլշևիկների թիվը կազմում էր 300 հոգի, նոյեմբերին այն հասավ 1500-ի։*

լովյան խռովության հարցը[2]։ Նշվեց, որ «ընդհուպ մինչև պինված ելույթը», Սարիղամիշի կայազորը պատրաստ է մարտնչելու ընդդեմ հակահեղափոխության։ Որոշվեց զորամասերում և Սարիղամիշի շրջանում հաստատել «հեղափոխական կարգապահություն», որի նպատակն էր «չթույլատրել հակահեղափոխական ելույթներ»։ Բոլշևիկների պահանջով ընդունված բանաձևը առաջադրում էր մի շարք կարևորագույն միջոցառումների անհապաղ իրագործում։ Դրանք էին. ռազմա-դաշտային դատարանին հանձնել Կոռնիլովին և նրա կողմնակիցներին, իրագործել հրամանատարական կազմի վճռական զտում, խռովության մասնակիցներին ոչ թե արտաքսել երկրից, այլ անպայման հանձնել դատարանին, Պետական դումայի և Պետական խորհրդի, հակահեղափոխության այդ գլխավոր որջերի «ոչնչացում», «կաստայական» այնպիսի կազմակերպությունների վերացում, ինչպիսիք էին Սպաների և Գյորգևյան կավալերների միությունները։ Պահանջվում էր դատի տալ սևհարյուրյակային այդ միությունները ստեղծողներին։ Բանաձևը միաժամանակ պահանջում էր 8-ժամյա բանվորական օրվա վերաբերյալ դեկրետի ընդունում, ագրարային հարցի լուծման ուղղությամբ միջոցառումների կիրառում, արտադրության և բաշխման նկատմամբ վերահսկողության սահմանում, բուրժուազիայի շահույթները կծկող պրոգրեսիվ եկամտահարկի կիրառում, դատարանի վերակազմում և դեմոկրատացում, ժամանակին Սահմանադիր ժողովի հրավիրում, խոսքի, ժողովների և մամուլի լիակատար ազատություն և այլն։ Արտաքին քաղաքական հարցերում դրվում էր առանց անեքսիաների և կոնտրիբուցիաների հաշտություն կնքելու, պատերազմին վերջ տալու պահանջները։

Էսեռներն ու մենշևիկները, որոնք նույնպես մասնակցում էին այդ ժողովին, ընդունակ չգտնվեցին մերժելու բոլշևիկների վերոհիշյալ արմատական պահանջները, որոնք բխում էին զինվորական մասսաների կենսական շահերից։ Նրանց, սակայն, հաջողվեց արձանագրել, որ կոռնիլովշչինան ուղղված է ոչ թե ընդհանրապես հեղափոխության դեմ, ինչպես հարցը դնում էին բոլշևիկները, այլ «ժամանակավոր կառավարության դեմ»։ Բանաձևում «լիակատար վստահություն» հայտնվեց Կերենսկուն, Պետրոգրադի սովետի գործադիր կոմիտեին և «հակահեղափոխության դեմ պայքարի գլուխ անցած ժամանակավոր կառավարությանը»[3]։

Կոռնիլովշչինայից հետո էլ բուրժուազիայի հետ էսեռների ու մենշևիկների շարունակվող համագործակցությունը խորին դայլությամբ ընդունվեց զինտակից զինվորների, տեղական ավելի քան 300 բոլշևիկների կողմից։ Բոլշևիկները չէին կարող համագործակցել այն ուժերի հետ, որոնք կամա թե ակամա նախապատրաստեցին կոռնիլովշչինան և որոնք գրեթե ոչինչ չէին սովորել հեղափոխության, հանրապետական կարգերի դեմ միապետական-գեներալական ուժերի ապստամբությունից։ Սակայն միանգամից էսեռների և մենշևիկների հետ կապերի խզումը կարող էր չհասկացվել դեռևս էսեռների ազդեցության տակ գտնվող զինվորների կողմից, որոնք օգոստոսի վերջերին և սեպտեմբերի սկզբներին Սարիղամիշում մեծամասնություն էին կազմում։ Անհրաժեշտ էր շարունակել խելացի քաղաքական կոմպրոմիսը՝ հանուն զինվորական մասսաների նվաճման։ Բոլշևիկների այդ տակտիկան դուգակցվում էր

2 Տե՛ս «Социал-демократ», Սարիղամիշ, 6 սեպտեմբերի, 1917, № 1։

3 Նույն տեղում։

միանգամայն ինքնուրույն քաղաքական գծի պահպանման ու խորացման հետ։ Զինվորների շրջանում տարվող բոլշևիկյան աշխատանքի գլխավոր մեթոդը շարունակում էր մնալ նրանց համար դասախոսությունների, գրույցների կազմակերպումը։ Սարիղամիշի բոլշևիկների օրգան «Социал-демократ» թերթում կարելի էր կարդալ այսպիսի հայտարարություն. «Երեքշաբթի օրը, սեպտեմբերի 12-ին, զինվորական ակումբում ընկ. Ս. Ալավերդյանը կկարդա դասախոսություն. «Ընթացիկ մոմենտը և հեղափոխական դեմոկրատիայի խնդիրները»[4]։ Այդպիսի դասախոսություններով հանդես էին գալիս նաև մյուս բոլշևիկները։ Սակայն տեղի ունեցող իրադարձությունները մի խումբ բոլշևիկների ջանքերով ներկայացնելը բազմահազարանոց կայազորին և ռազմակոմունիկացիոն այդ կարևորագույն հանգույցով անցնող զորամասերին խիստ դժվար էր։ Այդ պատճառով էլ երկրամասի և տեղական բոլշևիկյան կազմակերպությունների առաջ անհետաձգելի հարց ծառացավ, այն է՝ Սարիղամիշում ռուսերեն լեզվով հրատարակել բոլշևիկյան թերթ, որը կուսակցության կենտրոնական և կովկասյան մամուլի օրգանների ու գրականության լայնորեն տարածմանը զուգընթաց կպարզաբաներ իրադարձությունների ընթացքը՝ հատուկ ուշադրություն նվիրելով Սարիղամիշի շրջանի իրադարձություններին։ Չունենալով նյութական անհրաժեշտ միջոցներ, բոլշևիկները սեպտեմբերի սկզբներին հասան այն բանին, որ էսեռա-մենշևիկյան մեծամասնություն ունեցող Սարիղամիշի սովետի տպարանում, այդ սովետի օրգան «Известия...»-ին զուգահեռ, հրատարակվեր բոլշևիկյան «Социал-демократ» թերթը[5]։

«Ինտերնացիոնալի դրոշը, որպես միջազգային պրոլետարիատի դրոշ, որը մասսաներին տանում է դեպի սոցիալիզմ — ահա մեր օրգանի ուղեցույց աստղը»,— ազդարարում էին բոլշևիկները «Սոցիալ-դեմոկրատ»-ի առաջին համարի առաջնորդողում։ Նրանում պարզաբանվում էր պատմական դժվարին ժամանակաշրջանը և այդ պայմաններում բոլշևիկների անելիքները։ «Հենց այն ժամանակ, երբ հեղափոխական Ռուսաստանը ապրում է ծանր փորձություններ,— ասվում էր առաջնորդողում,— երբ հեղափոխության թշնամիները, նրա բացահայտ և բողոքկված գերեզմանափորները, անամոթաբար ջրի երես են հանել իրենց ողջ հակահեղափոխական էությունը, երբ երկրում ամեն օր բացահայտվում են... հակահեղափոխական դավադրություններ, երբ կադետական կուսակցության կողմից ղեկավարվող հակահեղափոխական բուրժուազիան, ձգվելով դեպի նեղուցներն ու Կոստանդնուպոլիս, առանց ամոթի և բացահայտորեն հանդես է գալիս ընդդեմ հեղափոխության, երբ պարենային-ֆինանսական քայքայումը, ինչպես դամոկլյան սուր, կախվել է մեր երկրի վրա,— մենք լույս ենք ընծայում մեր «Սոցիալ-դեմոկրատ» թերթի առաջին համարը»։

Թերթը նշում էր այն պատասխանատվությունը, որը պատմության բեկումնային դարաշրջանում ընկած էր «պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության կուսակցության վրա, որպես հեղափոխական շարժման ավան-

---

4 Նույն տեղում։

5 Թերթի երկու համարները պահպանվում են ՍՍՀՄ հեղափոխության թանգարանում (տե՛ս № 49014)։ Այդ համարների ֆոտո-պատճենները մեզ հոժարակամ տրամադրել է պատմ. գիտ. դոկտոր ընկ. Խ. Բարսեղյանը։ Տե՛ս նաև «Բանբեր Հայաստանի արխիվների» 1964 թ. № 2-ը, ուր Խ. Բարսեղյանի առաջարանով հրապարակված է թերթի նյութերի մի մասը։

զարդիս։ Ողջունելով Սարիղամիշի բանվորներին ու զինվորներին հեղափոխության կիսամյակի առթիվ, թերթը գրում էր. «մենք ոչ մի բոպե չենք կորցնում այն բանի հույսը, որ հեղափոխական պրոլետարիատը և բանակը ... իրենց մեջ ուժ կգտնեն... հզոր կազմակերպություններով դեմ կանգնելու բոլոր նրանց, ովքեր կհանդգնեն հարձակվել ռուսական հեղափոխության նվաճումների վրա»։ Բոլշևիկները թերթում շարադրում էին բոլոր այն արմատական պահանջները, որոնց լուծման անհրաժեշտությունը գրվում էր հեղափոխության զարգացման տրամաբանությամբ։ Դա վերաբերում էր և՛ ներքին, և՛ արտաքին քաղաքականությանը։ Հասկանալի է, որ հարցերի անսքող շարադրումը չէին կարող ընդունել իրենց «հեղափոխական դեմոկրատիայի» կուսակցություններ կոչող էսեռներն ու մենշևիկները։ Այդ պատճառով էլ, թերթի առաջին համարը լույս տեսնելուց հետո, էսեռները զգացին, որ հետևողական բոլշևիզմի այդ մարտական օրգանը զինվորական շրջաններում խարխլում է իրենց ոտքի տակի հողը։ Սարիղամիշի բոլշևիկների դեմ ստեղծվում է ռեակցիոն հրամանատարության, բանակի էսեռական Երկրային սովետի և տեղական համաձայնողական ուժերի միասնական դաշինք։ Նույն այս ժամանակաշրջանին է համընկնում կովկասյան ռազմական օկրուգի շտաբի սեպտեմբերյան ամփոփագիրը, ուր տագնապով նշվում է, որ «Սարիղամիշում շատ բոլշևիկներ կան»[6], որ «Սարիղամիշում... նկատվում է բոլշևիկների ազդեցություն»[7] և այլն։

Ահաբեկված բոլշևիկների գործունեության ակտիվացումից, բանակի հրամանատարության ու Երկրային սովետի հավանությամբ, նրանց իսկ թելադրանքով, էսեռա-մենշևիկյան սովետը գործնականում արգելեց բոլշևիկյան թերթի հրատարակումը։

Բոլշևիկյան մամուլի նկատմամբ կիրառվող հալածանքի և նյութական ծանր պայմաններում, մոտ մեկ ամիս հետո, հոկտեմբերի 8-ին, լույս տեսավ «Սոցիալ-դեմոկրատ»-ի 2-րդ համարը, սակայն այս անգամ արդեն ոչ թե Սարիղամիշում, այլ մի այլ վայրում, որը գաղտնի էր պահվում[8]։ Ցարիզմի տապալումից վեց-յոթ ամիս հետո Սարիղամիշի բոլշևիկյան օրգանին վիճակված էր նույն այն ճակատագիրը, ինչ բոլշևիկյան մամուլին ցարիզմի մղձավանջային ժամանակներում։ Երկրորդ համարի, «Խմբագրության կողմից» հաղորդագրության մեջ թերթը գրում էր, որ ՌՍԴԲԿ Սարիղամիշի բյուրոյի միջոցով յուրաքանչյուր օր տարածվում է մարքսիստական ուղղության հազարից ավելի օրինակ թերթ։ Այդ վերաբերում էր մասնավորապես «Պրավդա» և «Կավկազսկի ռաբոչի» թերթերին։ Նույն այդ շրջանում «Կավկազսկի ռաբոչի»-ում կարելի էր կարդալ, որ կովկասյան բոլշևիկների օրգանը Սարիղամիշում «ստանում և վաճառում են բացահայտորեն»[9]։ Չնայած այդ ամենին, «Սոցիալ-դեմոկրատ»-ում նշվում էր, որ «շատ կարևոր է մեծ թվով զինվորներ և բանվորներ ունեցող Սարիղամիշում ունենալ սեփական օրգան։ «Պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության օրգանը,— շարունակում էր թերթը,— գոյություն կունենա բոլոր պայմաններում, եթե միայն նա աջակցություն գտնի ժո-

6 ԿՊՒՊԱ, ֆ. 1300, ց. 1, գ. 55, թ. 352։

7 Նույն տեղում, թ. 368։

8 Մենք կարծում ենք, որ «Սոցիալ-դեմոկրատ»-ի 2-րդ համարը լույս է տեսել Ալեքսանդրոպոլում, «Պրավդա ժիզնիս» բոլշևիկյան թերթի տպարանում։

9 Տե՛ս «Կավկազսկի ռաբոչի», № 180, 22 հոկտեմբերի։

ղովրդական լայն մասսաների մեջ։ Ինչպիսի արգելքներ էլ որ հանդիպեն, մենք չենք թույլ տա մարելու մեր «Սոցիալ-դեմոկրատ»-ին։ Մեր բարեկամ ընթերցող ընկեր զինվորներն ու բանվորները, որոնք ամեն օր տասնյակներով դիմում են մեր խմբագրությանը՝ խնդրելով մեր թերթի հերթական համարը, մենք նախազգուշացնում ենք, որ երկրորդ և մնացած համարները[10] կհրատարակվեն ոչ Սարիղամիշում։ Թող ընկեր բանվորներն ու զինվորներն իմանան, որ մաքուր մարքսիզմի տեսակետը պաշտպանող և հետևողականորեն, առանց տատանման պրոլետարիատի և գյուղական չքավորության շահերը պաշտպանող թերթը, Ռուսաստանի համար ներկա ծանր մոմենտին, լռել չի կարող։ Մենք գիտենք, որ այլ քաղաքում մեր սարիղամիշյան օրգանի տպագրությունը կուղեկցվի մեծ դժվարություններով և անհարմարություններով, բայց ոչ մի բանի չնայելով, մենք կհաղթահարենք այդ ամենը հանուն գոյության «Սոցիալ-դեմոկրատ»-ի, որը մասսաներին առաջնորդում է դեպի ինտերնացիոնալի վերականգնումը և սոցիալիզմի հաղթանակը»[11]։

Թերթի մեր ձեռքի տակ եղած համարներն էլ բավական են պատկերացնելու համար այն հերոսական աշխատանքը, որ տանում էին Սարիղամիշի բոլշևիկները՝ հանուն զինվորական մասսաների բոլշևիկացման, հանուն ռեակցիայի և համաձայնողականության մերկացման։

Առաջին համարի նյութերից հատկապես ուշագրավ է Ստ. Ալավերդյանի («Старий Трофим») «Ինտերնացիոնալը, համաշխարհային պատերազմը և ռուսական հեղափոխությունը» հոդվածը, ուր մերկացնելով համաձայնողական կուսակցությունների դավաճանությունը, նացիոնալիզմի ու շովինիզմի նրանց քաղաքականությունը, հեղինակը աշխատավորներին էր դիմում մարքսյան «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» նշանաբանով, պրոլետարական ինտերնացիոնալիզմը ներկայացնելով որպես կապիտալիզմի լծից աշխատավորների ազատագրական պայքարի միակ ռեալ երաշխիքը։ Ալավերդյանը սերտ կապ էր տեսնում մի կողմից էսեռների ու մենշևիկների, իսկ մյուս կողմից՝ կադետների հակահեղափոխական գործունեության միջև, որի ուղղակի արդյունքը հանդիսացավ կոռնիլովշչինան։ Նա գրում էր, որ ցարիզմը տապալելուց հետո «բախտի քմահաճույքով հեղափոխության գլուխ կանգնեցին պաշտպանողականների քաղաքականապես միամիտ խմբերը և հակահեղափոխական բուրժուազիան. առաջինները, վախենալով պրոլետարիատի վճռական հեղափոխական գործողություններից, գերադասեցին կտրել կապերը նրա հեղափոխական մասից և համաձայնության մեջ մտնել բուրժուազիայի հետ. վերջինը, այսինքն բուրժուազիան, ցանկանալով ամեն գնով թաղել հեղափոխությունը, անգամ ռազմաճակատում պարտությունների գնով (համաշխարհային բուրժուազիան միշտ կարող է զիջել մեկը մյուսին), ժամանակ առ ժամանակ քողարկվելով կարմիր վարդակապով, պատրաստում էր հակահեղափոխություն»[12]։

Ալավերդյանը պաշտպանողական և բուրժուական գործիչների «կործանարար գործունեությունը» դիտում էր որպես մի երկար շղթա, որը ձգվում էր ցարիզմի տապալումից մինչև կոռնիլովշչինան։ Այդ շղթայի գլխավոր օղակ-

---

10 Մինչև այժմ հայտնի են «Սոցիալ-դեմոկրատ»-ի 2 համար։ Մյուս համարները դեռևս հայտնաբերված չեն, կամ, որ ավելի հավանական է, լույս չեն տեսել։

11 «Социал-демократ», № 1.

12 Նույն տեղում.

ներն էրն. «կոալիցիան և համբույրները բուրժուազիայի հետ, բոլշևիկների և ընդհանրապես ինտերնացիոնալիստների հալածանքը, հարձակումը ռազմաճակատում ի շահ «դաշնակիցներիս» և նրա կապիտալի..., բացահայտ պատերազմի հայտարարումը հեղափոխական պրոլետարիատին, բոլշևիկների ու ինտերնացիոնալիստների ձերբակալությունները և ձախ մամուլի ջախջախումը, ռազմաճակատում մահապատիժ մտցնելը և հեղափոխական գնդերի ու բանակային կոմիտեների հալածանքը, հակահեղափոխության բանդայի հետ Ռուսաստանի բոլոր կենդանի դիակների մոսկովյան խորհրդակցությունը, Կոռնիլովի պատվին կազմակերպված կառնավալները և այլն։ Իբրև հետևանք պաշտպանողականների և բուրժուազիայի վերը թվարկած բոլոր գործողությունների, մենք ստացանք լիովին կազմակերպված հակահեղափոխություն...»[13],

Խորապես մտահոգված հեղափոխության ճակատագրով, Ալավերդյանը դիմում էր զինվորներին, բանվորներին, գյուղացիներին՝ հանդես գալու միասնական, եռանդուն գործողություններով, թույլ չտալ, որպեսզի կործանվի վտանգի մեջ գտնվող հեղափոխությունը, որպեսզի նորից չգործեն կախաղանները, բանտերն ու աքսորը։ «Աշխատավորների, Սիբիրում տառապած ազատության բոլոր մարտիկների հույսը ձեր վրա է,— գրում էր նա։— Թող անցյալի սխալները դառը փորձ ծառայեն մեր հեղափոխական գործողությունների համար»։ Նա կոչ էր անում համախմբվել հեղափոխական կազմակերպությունների շուրջը, «վերցնել Ինտերնացիոնալի կարմիր դրոշը, պրոլետարական հզոր բանակով գնանք գրոհի ընդդեմ հակահեղափոխության»[14],

Թերթի նույն այդ համարում տպագրված էր բոլշևիկ զինվոր Խրիստո Խիրջիևի «Կադետների հակահեղափոխական հարձակումները» հոդվածը, ուր պարզաբանվում էր այդ կուսակցության հակաժողովրդական էությունը, մերկացվում էր հաղթական իմպերիալիստական պատերազմի, պետական խորհրդակցությունում նրա գործունեության, Սահմանադիր ժողովը ձգձգելու վերաբերյալ նրա վարքագծի ողջ հակահեղափոխական իմաստը։ Զինվորը գրում էր, որ եթե 1905 թ. այդ կուսակցությունը պաշտպանություն էր գտնում ցարիզմի կողմից, ապա այժմ նա հենվում է մութ ուժերի վրա՝ հանձինս ռազմական կլիկների, ձգտելով ճնշել ռուսական հեղափոխությունը, համաշխարհային հեղափոխության նախագուշակը։ Բայց կադետների ապաստանը այժմ անհուսալի է։ Ապաստանի դավադիրները ձերբակալված են[15]։ Պահանջվում էր վճռական հարված հասցնել հակահեղափոխության բոլոր ուժերին, այլապես «այդ ուժերի նոր հլուցները անխուսափելի են»[16],

«Սոցիալ-դեմոկրատ»-ում նյութեր են տպագրվել սեպտեմբերի 16-ին և 29-ին տեղի ունեցած ժողովների վերաբերյալ։ Զինվորական տեղական ակումբում բոլշևիկները սեպտեմբերի 16-ին կազմակերպել էին հերթական դասախոսություն՝ նվիրված ընթացիկ մոմենտին։ Զինվորների, բանվորների և տեղական հեղափոխական ինտելիգենցիայի առաջ դասախոսությամբ հանդես է եկել Ստ. Ալավերդյանը։ Ինչպես նշում է թերթը, իր հանդամանալից դասախոսության մեջ նա «պարզորոշ և պատկերավոր կերպով լուսաբանեց պաշտ-

13 Նույն տեղում։
14 Նույն տեղում։
15 Նույն տեղում։
16 Նույն տեղում։

պանողականների համաձայնողական ու անվճռական քաղաքականության ողջ սխալն ու կործանարար լինելը», միաժամանակ նշելով, որ «զորքը և գյուղական չքավորությունը վերջամսյա հեղափոխական պայքարում լիովին որոշակի են դարձել և սկսել են սահմանապատվել պաշտպանողականների մանրբուրժուական ազդեցությունից»[17]։ Նշվում էր, որ այսպես կոչված հեղափոխական-դեմոկրատական կազմակերպությունների մեծամասնությունը բոլորովին չի համապատասխանում իր ընտրողների տրամադրությանն ու գիտակցությանը և որ էսեռներն ու մենշևիկները հանդիսանում են «բռնադատիչներ»։ Բոլշևիկ հոետորի դեմ հանդես եկավ մենշևիկ Դուրգարյանը, որը փորձում էր «հիմնավորել», որ «բոլշևիկները առաջ են վազում» իրադարձություններից, որ «մենշևիկները ճիշտ ժամանակին են դնում քաղաքական դիագնոզները»[18]։ Խարանը «դայրությամբ ընդունեց» նաև էսեռ ընդդիմախոսին։ Գաղափարական սուր պայքարի մթնոլորտում էսեռներին ու մենշևիկներին անհրաժեշտ հակահարված հասցրին բոլշևիկները։ Հանդես եկան Բ. Կիասովը և Ստ. Ալավերդյանը։ Վերջինիս եզրափակիչ խոսքի մասին ինֆորմացիայում նշվում է, որ «դասախոսը միանգամայն քաղաքավարի և սպառիչ պատասխանեց իր ընդդիմախոսին, սրով հարուցեց լսարանի բուռն ծափերը»[19]։

Թերթի նյութերից տեղեկանում ենք, որ զինվորների ու բանվորների համար ընթացիկ մոմենտին նվիրված դասախոսություն է կարդացվել նաև սեպտեմբերի 29-ին։ Զորքը լսելով Ալավերդյանի դասախոսությունը, միաձայն բոլշևիկյան բանաձև է ընդունել դատապարտելով համաձայնողականությունը հակահեղափոխական բուրժուազիայի հետ, մի բան, որը «երկիրը և հեղափոխությունը հասցրել է կործանման եզրին»[20]։ Բանաձևը վճռականորեն պահանջում էր. գաղտնի պայմանագրերի անհապաղ հրապարակում, հաշտության կնքում, հրամանատարական կազմի զտում և բանակի լիակատար դեմոկրատացում, մահապատժի վերացում, մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումը հողը գյուղացիությանը հանձնել, բանտերում գտնվող բոլշևիկների շուտափույթ ազատ արձակում, մամուլի լիակատար ազատություն, առանց ձգձգման Սահմանադիր ժողովի հրավիրում և այլն։

Հոկտեմբերի սկզբներին նոր ուժով էր հնչում Ալավերդյանի մերկացնող խոսքը կադետական բուրժուազիայի և նրա պոչից քարշ եկող էսեռա-մենշևիկյան համաձայնողականության հասցեին[21]։ Քննադատելով փետրվարից ի վեր ստեղծված կոալիցիոն բոլոր կառավարությունների անվճռականությունը, այն, որ նրանք չկարողացան «մեռած կետից շարժել երկրի դրությունը», որ այդ ամենը բացահայտեցին «բուրժուազիայի հետ համաձայնողականության կործանարարությունը», Ալավերդյանը առանձնակի սրությամբ էր քննադատում նաև «սեղջկական» («МУЖИЦКИЙ») մինիստր էսեռ Չերնովին, որի նախագծերից «ոչինչ ջերմացնող» բան չէր ստացել աշխատավոր գյուղացին։ Էսեռականության քննադատությունը Սարիղամիշում և ընդհանրապես կովկասյան բանակում առանձնակի կարևորություն ուներ։ Գյուղացիական բանակի զգալի մասը հավատում էր չերնովների անբան խոսակցություններին և պասսիվ

17 Նույն տեղում, № 2, 8 հոկտեմբերի։
18 Նույն տեղում։
19 Նույն տեղում։
20 Նույն տեղում։
21 Տե՛ս նույն տեղում, Ս. Ալավերդյանի «Սարիղամիշ, 8-ը հոկտեմբերի» հոդվածը։

դիրք էր բռնում վճռական գործողությունների հարցում։ Ահա թե ինչու և՛ Ալավերդյանը, և՛ Սարիղամիշի մյուս աչքի ընկնող բոլշևիկները մեծ կարևորություն էին տալիս էսեռականության, մասնավորապես նրանց առաջնորդների ծրագրերի քննադատությանը, այդ ծրագրերը դիտելով նրանց համաձայնողական տակտիկայի, գործելակերպի ընդհանուր համայնապատկերի վրա, որպես շաղակրատական սոցիալիզմի մի օղակը։

Ալավերդյանը բացահայտում էր կոռնիլովշչինայից հետո մասսաներին խաբելու էսեռա-մենշևիկյան նոր հնարանքի՝ Պետրոգրադի «Դեմոկրատական խորհրդակցության» դասակարգային էությունը, նշում, որ այն ի վիճակի չեղավ լրջորեն դնելու երկրի առաջ կանգնած կենսական խնդիրներ, մասնավորապես ուժեղ, վստահելի հեղափոխական իշխանության ստեղծման ռեալ ուղիները։ Դրա պատճառն այն էր, որ, ինչպես դիպուկ նկատում էր նա, «հիմնովին ջրիկացած մանրբուրժուական կազմակերպությունների ներկայացուցիչներով, նա («Դեմոկրատական խորհրդակցությունը»— Հ. Մ.) կանգնեց համաձայնողականության, կոմպրոմիսների ուղու վրա, որոնք խստորեն դատապարտվել են ռուսական հեղափոխության վեցամսյա ժամանակաբնթացքով»[22]։ Ալավերդյանը մարքսիստ տեսաբանի և պրակտիկ բոլշևիկ գործչի սուր դիտողականությամբ դատապարտում էր հակահեղափոխական բուրժուազիայի և համաձայնողական կուսակցությունների այդ «նոր» «պատմական էքսպերիմենտը», որի նպատակն էր վարկաբեկված միլյուկովների, ռոձյանկոների հետ կոալիցիան փոխարինել բուբլիկովների, տերեշչենկոների և նեկրասովների կոալիցիայով։ «Մեզ համար, մարքսիստներիս համար,— գրում էր Ալավերդյանը— այս կամ այն անհատը չի դեր խաղում. մեզ համար կարևոր է իմանալ, թե այս կամ այն անհատը ո՞ր հասարակական դասակարգի գաղափարախոսն է։ Այդ տեսակետից մեզ համար բուբլիկովներն ու տերեշչենկոները նույնպես հակահեղափոխականներ են, ինչպես միլյուկովներն ու ռոձյանկոները, միայն այն տարբերությամբ, որ առաջինները իրենց կերպարանքը ցույց են տվել վաղուց, իսկ մյուսները ավելի ուշ»[23]։

Ալավերդյանը նկատում էր, որ ինչպես կենտրոնում, այնպես էլ պրովինցիայում բոլշևիկները, պահանջելով ստեղծել ուժեղ հեղափոխական կառավարություն, դնում էին այդ իշխանությունը սովետներին հանձնելու խնդիրը։ Նրանք լավ էին հասկանում, որ հեղափոխության հաղթանակի գործում վճռական նշանակություն ուներ մայրաքաղաքում, հեղափոխության առաջնակարգ օջախներում իշխանությունը արդեն բոլշևիկացած սովետներին անցնելը։ Ահա թե ինչու կովկասյան համաձայնողականությունը դիմադրում, թշնամանքով էր ընդունում բոլշևիկների՝ «Ամբողջ իշխանությունը Սովետներին» նոր լոզունգը։ Ըստ էության, Անդրկովկասում այդ լոզունգը ևս նշանակում էր իշխանությունը բոլշևիկներին հանձնելու պահանջ։ Իշխանության նվաճման հարցում չէր կարելի պրովինցիան բաժանել կենտրոնից։ Կենտրոնում իշխանությունը բոլշևիկներին անցնելու դեպքում, եթե տեղում ճիշտ տակտիկա կիրառվեր, ապա սովետական իշխանությունը կհաղթանակեր նաև պրովինցիայում։ Այդ պարզ տրամաբանությունը հասկացան և՛ բոլշևիկները, և՛ նրանց թշնամիները։ Միանգամայն ճիշտ էր գրում Ալավերդյանը, որ միայն սովետակաս

22 Նույն տեղում։
23 Նույն տեղում։

իշխանությունը «կարող է փրկել երկիրը և հեղափոխությունը կործանումից»[24]։

Հոկտեմբերի սկզբներին Սարիղամիշի բոլշևիկները շարունակում էին մերկացնել հակահեղափոխության նոր փորձերը երկրում և զինվորական մասսաներին պարզաբանում այդ փորձերի ճակատագրական սպառնալիքը։ Առանձնակի ուշադրություն է գրավում «Սոցիալ-դեմոկրատ»-ում Ի. Կիասովի «Կոռնիլովշչինան դեռևս չի լիկվիդացված» հոդվածը[25]։ Նա զինվորներին ցգուշացնում էր, որ «հակահեղափոխության ուրվականը դեռևս թևածում է», որ պատահական չէ այն հաստատված իրողությունը, որ կոռնիլովշչինայի ոգեշնչողը հանդիսացան բուրժուական ռեակցիոն գործիչ Գուչկովը և «ռուսական հեղափոխության առաջնորդ» Կերենսկին։ Պատմության այդ դառը դասը շատ բան պետք է ասի հեղափոխական զինվորներին ու բանվորներին։ Այդ նշանակում էր, որ հակահեղափոխական այդ ուժերը լռել չէին կարող, որ նրանք նորից կփորձեն խեղդել հեղափոխությունը, խեղդել բոլշևիզմը։ Այդ էր վկայում համաձայնողական աջ գործիչների պահանջը՝ համատեղ գործելու «հակահեղափոխական ոհմակի» հետ, «արյունով ու երկաթով» պայքարել ձախից եկող «անարխիայի» բոլշևիզմի դեմ։ Դիմելով համաձայնողական գործիչներին Կիասովը գրում էր. «Եթե դուք չեք ցանկանում, որպեսզի հեղափոխության ալիքը ձեզ վերջնականապես նետի ծանծաղուտը... ապա հենց այժմ խզեք ձեր կապերը հակահեղափոխական բուրժուազիայից, տառապած երկրի վրա փորձեր մի՛ք անի, մտարերեցեք ձեր կողմից մոռացված Ինտերնացիոնալը, և հենվելով հեղափոխական պրոլետարիատի ու զորքերի վրա, Ինտերնացիոնալի իսկական ներկայացուցիչների հետ մեկտեղ վճռական պատերազմ հայտարարեք ռուսական բուրժուական հակահեղափոխությանը և համաշխարհային իմպերիալիզմին... Իսկ քանի դեռ դուք այդ բանը չեք արել ու չեք անի, սարսափելի բաղաքացիական պատերազմի ուրվականը կշրջի մեր վրա։

Մի՛ք հանգստանա Կոռնիլովի ձախողմամբ։ Կոռնիլովշչինան դեռ ապրում է, իշխանությունը դեռ նրա ոգեշնչողների ձեռքումն է... Վերջին խոսքը ձեզ է պատկանում, քանի դեռ ուշ չէ»[26]։

Սարիղամիշի բոլշևիկները, ինչպես և ողջ կուսակցությունը, մեծ նշանակություն էին տալիս Սահմանադիր ժողովի ընտրությունների արդեն սկսված կամպանիային։ Բոլշևիկների համար այն ոչ թե նպատակ էր, այլ միջոց հաղթական պրոլետարական հեղափոխության ճանապարհին։ Այդ նկատառումներով էլ այստեղ ևս բոլշևիկները լայնորեն ներգրավվեցին նախընտրական կամպանիայի մեջ։ Ժողովներում, միտինգներում և «Սոցիալ-դեմոկրատ»-ի էջերում բոլշևիկները մեծ ուշադրություն նվիրեցին ժամանակի այդ կարևոր իրադարձություններից մեկին։ Թերթի 1-ին համարում, բոլշևիկյան կազմակերպությունը «Դեպի Սահմանադիր ժողով» իր կոչի մեջ նշում էր, որ հեղափոխական զինվորների և բանվորների ողջ եռանդը գործի է դրվում սկսված հեղափոխությունը մինչև հաղթական վախճանի հասցնելու համար։ «Կեցցե Սահմանադիր ժողովը» լոզունգը, որը առաջադրեց հեղափոխությունը ցարիզմի տապալումից անմիջապես հետո ընդհանուր, հավասար և գաղտնի ընտրությունների

24 Նույն տեղում։
25 Տե՛ս «Սոցիալ-դեմոկրատ» № 2, 8 հոկտեմբերի։
26 Նույն տեղում։

հիման վրա «պետք է ամրապնդի հեղափոխական դեմոկրատիայի նվաճումներն և լուծի պրոլետարիատի ու աշխատավոր դեմոկրատիայի ցավոտ ու նրանց համար թանկագին հարցերը»[27]։ Մերկացվում էր բուրժուազիայի մտադրությունը՝ ձգձգելու Սահմանադիր ժողովի հրավիրումը։ «Ոչ մի հետաձգում, որին նույնպես նոանդով ձգտում է հասնել հակահեղափոխական բուրժուազիան, տանել չի կարելի»,— գրում էր թերթը։ Պահանջվում էր ծավալել միասնական ագիտացիա և նյութական միջոցներով աջակցել նախընտրական կամպանիային։ Թերթը գրում էր, որ եթե բուրժուական ու մանրբուրժուական կուսակցություններն այդ նպատակի համար լայնորեն օգտվում էին բանկերի, իմպերիալիստական բուրժուազիայի կողմից նրանց առատորեն ընձեռած միջոցներից, ապա բանվորները, զինվորներն ու գյուղացիները այդ միջոցները իրենք պետք է հայթայթեն։ «Մեր կուսակցությունը, հեղափոխական դեմոկրատիայի կուսակցությունը, կարող է հույսը դնել միայն դեմոկրատիայի վրա»[28],— գրում էին բոլշևիկները։

Սարիդամիշի բոլշևիկների բյուրոն սկսում է նախընտրական կամպանիան։ Ընտրական կամպանիայի բուռն շրջանում Սահմանադիր ժողովի մասին ընդարձակ հոդվածով հանդես եկավ բանակային աշքի ընկնող բոլշևիկներից մեկը, Յա. Զերնյավսկին։ Պատմությունը, գրում էր նա, թողել է մի հիշողություն։ Պատմում են, որ հոգնած սովորական պալատներից, Ցիրզավետա թագուհին ձմռանը, Նևայի ափին սարքել է տալիս Սառցե տուն, որպեսզի այնտեղ շարունակի իր խրախճանքները։ Եկել է գարուն, տունը փլվել է և Նևայի հորդառատ ջրերը իրենց հետ տարել են թագավորական այդ սառցե դղյակը... Ռուսական ցարիզմի ողջ պատմությունը նման է այդ տան հետ կապված պատմությանը, եզրակացնում է հեղինակը։ Դարեր շարունակ աշխատավորների հառաչանքների, արյան ու քրտինքի հաշվին բեֆ են արել ցարերն ու իշխող դասակարգերը։ Բայց ոչինչ հավերժ չէ։ Հավերժ չէր նաև ցարական մղձավանջը։ «Եվ ահա, ճառագեց մարտյան արևը (փետրվարյան հեղափոխությունը — Հ. Մ.)։ Նրա ճառագայթները հալեցին սառույցը և սառցե տնակը փլվեց գարնանային ջրերի մեջ, նրա փլատակների տակ առնելով բեֆ անողներին»[29]։

1905 թ. ցնցեց, խարխլեց ռոմանովների գահը։ 1917 թ. սրբեց տարավ նրան, ով ասում էր, թե «ժողովուրդն այդ ես եմ», տարավ նրանց, ովքեր հազի փոխարեն ժողովրդին զնդակներով էին կերակրում։ «Աստծո կամքին» ապավինած ցարերը նահանջեցին ժողովրդի կամքի առաջ։ Ռեալ և հնարավոր դարձավ դեռևս 1905 թ. հեղափոխական ժողովրդի կողմից առաջադրված «կենսական հարցի»՝ Սահմանադիր ժողովի հրավիրումը։ Զինվորներին ու բանվորներին պարզաբանվում էր նախագծվող ռուսաստանյան առաջին դեմոկրատական պառլամենտի էության, նպատակների, նրա ընտրությունների հետ կապված հարցերը։ Եթե Արևմուտքի տերությունները ընդհանուր ընտրական իրավունքը ձեռք էին բերել տասնամյակների դանդաղ պայքարի գնով, ապա Ռուսաստանում այն ձեռք բերվեց «բնական ճանապարհով» — հաղթական ժողովրդական հեղափոխության միջոցով։ Հեղափոխությունը հնարավորություն

27 «Սոցիալ-դեմոկրատ», № 1։
28 Նույն տեղում։
29 Նույն տեղում, № 2։

էր ընձեռել նաև ընտրություններին մասնակցել բոլոր զինվորականներին։ Բացառություն էին կազմում աքսորականներն ու բանտարկյալները։

Հեղափոխության կարևոր նվաճումն էր համարվում այն, որ ընտրելու և ընտրվելու իրավունքից զրկվում էին թագավորական տան բոլոր անդամները։ Բոլշևիկյան մամուլը պարզաբանում էր ցարական-դումայական հին ընտրական սիստեմի ողջ հակաժողովրդական, կալվածատիրական-բուրժուական կառուցվածքի նողկալի արատները, նրան հակադրելով հավասար, ընդհանուր, ուղղակի, գաղտնի ընտրությունների մեծ նվաճումը, որը դեմոկրատական իրավունքների տեսակետից Ռուսաստանը կանդնեցնում էր աշխարհի առավել դեմոկրատիկ երկրների շարքը։

Ընտրական կարգի պարզարանմանը զուգընթաց, մի բան, որը մեծ նշանակություն ուներ խավար, անգրագետ բանակի համար, բոլշևիկները իրենց թերթում առավել կարևոր ուշադրություն էին նվիրում այն հարցին, թե ո՞ւմ, ո՞ր կուսակցության ներկայացուցչին պետք է ձայն տալ։ Բոլշևիկները զգուշացնում էին, որ դեպի ընտրությունները աշխատավորների ցուցաբերած անտարբերությունից կարող են օգտվել ժողովրդի թշնամիները։ «Անհրաժեշտ է հիշել, որ դեմոկրատիայի ու աշխատավորների թշնամիները քնած չեն»՝, որ նրանք կաշխատեն մոլորեցնել զինվորներին, խլել նրանց ձայները և օգտագործել դրանք հենց իրենց զինվորների, այսինքն բանվորների ու գյուղացիների դեմ հանուն իմպերիալիստական պատերազմը շարունակելու, շահագործող դասակարգերին պաշտպանելու։

Սարիզամիշի բոլշևիկների եռանդուն գործունեությունը ուղեկցվում էր մանրբուրժուական կուսակցությունների անողոք քննադատությամբ։ Կոռնիլովշչինայի ձախողման առաջին օրերին, Սարիզամիշի էսեռ-մենշևիկյան կազմակերպությունները, մի կողմից քաշվելով իրենց նախկին արարքներից, մյուս կողմից հաշվի առնելով բոլշևիկների հեղինակության արագ աճը, աշխատում էին բոլշևիկների հանդեպ զուսպ լինել։ Սակայն այդպիսի դրությունը երկար շարունակվել չէր կարող։ Էսեռների, մենշևիկների և դաշնակների դասակարգային շահերը նրանց ամեն օր, ամեն ժամ մղում էին ընդդեմ բոլշևիզմի։ Այդ ավելի ցայտուն զգացվեց Պետրոգրադում դեմոկրատական խորհրդակցության հրավիրումից հետո, երբ բոլշևիկները նոր ուժով մերկացրին համաձայնողական կուսակցությունների դավաճանությունը, նրանց «նոր» գործարքը բուրժուազիայի հետ։ Սարիզամիշի էսեռների օրգան «Земля и воля» թերթը, դեմոկրատական խորհրդակցությունից հետո, քննադատական կրակի տակ առավ բոլշևիկներին։ «Մարտնչող բոլշևիզմը,— գրում էր այդ թերթը,— նորից նյարդայնանում է, դուրս է գալիս իրենից, գայրանում է... դեմոկրատական խորհրդակցությունը չարդարացրեց նրա հույսերը... դեմոկրատական խորհրդակցությունը չի ցանկանում բոլշևիկներին դիկտատորներ դարձնել, ողջ հեղափոխական իշխանությունը նրանց ձեռքը հանձնել։ Այստեղից էլ սրտի ու կայծակ, փոթորիկ և կեղտ մենշևիկների և սոց.-հեղափոխականների գլխին։ Եվ նրանք քարոզում են նոր հեղափոխություն ընդդեմ հեղափոխության... Այդ ի՞նչ է,— հարցնում էին էսեռները. մղձավանջային երազ, թե ապստամբության ապոլոգետի խելագար դառնացանք։ Միթե՞ հուլիսյան

30 Նույն տեղում։

օրերի դասը մոռացվել է նրանց կողմից»[31]։ Ահա թե ինչպես. կոռնիլովյան խռովությունից ընդամենը մի ամիս հետո, էսեռականությունը նորից հուլիսյան խրտվիլակով էր սպառնում բոլշևիկներին։ Սարիղամիշի բոլշևիկներն անպատասխան չէին կարող թողնել նման հայհոյանքներն ու սպառնալիքը իրենց և հեղափոխական մասսաների հասցեին։ «Սոցիալ-դեմոկրատ»-ը գրում էր, որ «Երբ Պետրոգրադյան խորհրդակցությունից առաջ երկրային կենտրոնը հարցում արեց Սարիղամիշի սովետին՝ իշխանության հարցի առթիվ նրա վերաբերմունքի մասին, դուք, պարոն էսեռներ, մեր հետ միասին միաձայն քվեարկեցիք մեր բանաձևի օգտին, որը վերաբերվում էր ընդհանրապես բուրժուազիայի հետ կոալիցիա չթույլատրելուն և իշխանությունը սովետներին հանձնելուն. իսկ այժմ խոսում եք ընդդեմ հեղափոխության, բոլշևիկների հեղափոխության մասի՞ն։ Այդ ի՞նչ է կատարվում ձեր հետ պ. պ. էսեռներ, մղձավանջային երազ, թե շփոթված քաղաքական տհասի խելագար զառանցանքը»[32]։

Հոդվածի հեղինակը, հավանաբար, Ի. Կիասովն է, որը զարմանք էր հայտնում այն բանի համար, որ էսեռները կարող են նորից այդպես անսքող արտահայտել իրենց ատելությունը բոլշևիզմի նկատմամբ, չնեղվելով այն ամոթալի փաստից, որ նրանց շարքերում են գործում կոռնիլովյան օրերին մերկացված «մեծ» հեղափոխականներ Կերենսկին ու Սավինկովը։ Հեղափոխական մասսաների կողմից ճանաչված այդ անունները բավական են,— գրում էր նա,— որպեսզի խելքը չթռցրած քաղաքական գործամոլները ամաչեն ու լռեն ընդմիշտ։ Բայց կյանքը ցույց էր տալիս, որ էսեռները լռել չէին կարող։ Համաձայնողական ճահճին սովոր «բաղքենինները» չէին կարող ընդառաջ գնալ արևին, ջինջ օդին ու լույսին... Ուստի բոլշևիկները գիտակցում, պարզ տեսնում էին, որ Սարիղամիշում ևս էսեռականության դեմ պայքարը թևակոխում է իր նոր, վճռական էտապը, որը պահանջում էր բոլոր ուժերի համընդհանուր մոբիլիզացիա։

Էսեռներին սկսեցին ձայնակցել մենշևիկները, որոնք Սարիղամիշում թույլ գտնվելով, դեռևս բոլշևիկների հետ միասին մեկ միասնական սոցիալ-դեմոկրատական դրոշով էին հանդես գալիս։ Բոլշևիկյան «Սոցիալ-դեմոկրատ»-ը անողոքաբար քննադատում էր Թիֆլիսի մենշևիկների կենտրոնական օրգան «Борьба»-ին, որը իր № 116-ի «Ուղիղ ճանապարհ» առաջնորդողում քննադատելով բոլշևիկյան կուսակցության Կենտրոնական կոմիտեի օրգան «Ռաբոչի պուտ»-ի այն տեսակետը, թե պետք է հրաժարվել զարտուղի, նենգ ճանապարհներից և ընթանալ ուղիղ ճանապարհով, իշխանությունը հանձնել սովետներին և ստեղծել պրոլետարիատի դիկտատուրա, գրում էր, թե «բոլշևիկները միանգամայն գիտակցաբար ձգտում են մեկուսացնել պրոլետարիատին, անջատել նրան դեմոկրատիայից, վերջինին չարացնել ընդդեմ բանվորների»։ Մենշևիկներին, ինչպես և նրանց համախոհ էսեռներին հատուկ էր մանրբուրժուական տատանումներն, այն գիծը, երբ «աջ ձեռքը տեղյակ չէր, թե ինչ է անում ձախը»։ Այդպիսի կտրուկ տատանումները, քաղաքական լաբախաղացությունը, որը հատուկ էր ամենից առաջ նրանց լիդեր Ն. Ժորդանիային, մի շարք անգամ արդեն իրեն ցույց էր տվել։ Թիֆլիսի սովետի վերա-

31 Նույն տեղում։
32 Նույն տեղում։

կանգնման պատմությունը, երկրորդ (մայիսյան) ժամանակավոր կառավարության նկատմամբ նրանց վարքագիծը, մերթընդմերթ բոլշևիկների նկատմամբ կիրառած վայրենի հալածանքը, կոռնիլովշչինայից հետո նոր «բարեկամական» շրջադարձը դեպի բոլշևիկները (Ժորդանիայի բանաձևը Թիֆլիսի սովետում սեպտեմբերի 3-ին) և այլն, և այլն վկայում էին այդ կուսակցության ու նրա պարագլուխների մերթ ամբոխավարական, մերթ ջարդարարական էությունը, «պատից պատ շպրտվելու» նրանց անկայունությունը, մի բան, որ մոլորեցնում էր աշխատավորների հետամնաց շերտերին, նրանց գերության մեջ պահում բուրժուական մեքենայություններին։ Հոդվածի հեղինակը դիպուկ հարց է տալիս, թե ինչո՞ւ են մենշևիկները այդպես ջանասիրաբար ձգտում «մանրբուրժուական ազրով լցնելու պրոլետարիատի ու բուրժուազիայի մեջ գոյություն ունեցող պատմական դասակարգային անդունդը» և ավելացնում, որ այդ բանը անիրագործելի ցանկություն է։ «Չզուշացեք,— գրում է թերթը։ Հեղափոխության Իններորդ ալիքը առաջ է շարժվում, որը վերջնականապես կողոդի և կմաբրի» էսեռա-մենշևիկյան ավգյան ախոռները[33]։

Սարիղամիշում բոլշևիկները պայքարում էին բոլոր նրանց դեմ, ովքեր շարունակում էին բանակի քայքայումը բացատրել «զինվորի վախկոտությամբ», որով զինվորի անհաշիվ տառապանքներին գումարվում էր ևս մի նոր հոգեկան տառապանք։ Սեպտեմբերի վերջերին զինվորների շրջանում տարածվել էր մի թերթիկ։ Նրանում զինվորը ինչի մեջ ասես, որ չէր մեղադրվում։ «Վախկոտ», «դավաճան», «հայրասպան» և նման բաներ։ «Օհ ինչպես նոզկալիորեն փախչում էիր դու, ռուս զինվոր,— բացականչում է կոչի հեղինակը, մատնանշելով հունիս-հուլիսյան հարձակման ձախողումը ռազմաճակատում։ Աշխարհը ոչ մի տեղ դեռ չի իմացել և երբեք էլ չի տեսել այդպիսի փախուստ, դավաճանների այդպիսի կուտակում։ Նա գիտեր մի Հուդայի, իսկ այստեղ տասնյակ հազարավոր հուդաներ...»[34] և նման բաներ։

Բոլշևիկներն անարգանքի սյունին էին գամում բոլոր նրանց, ովքեր այդպես էին պատասխանում երեք տարի շարունակ դաժան պատերազմի բոցերի մեջ տառապած իսկական հայրենասեր զինվորին, որին «ամենավայրենի» ցարիզմն ու կալվածատերերի Ռուսաստանը պատմական այս կամ այն էտապում մղել էին նաև «հայրասպանության», «եղբայրասպանության»։ Դրանում մեղավորը Իշվառության ու աղքատության մեջ մեծացած զինվորը չէր։ Նրան այդպես էին սովորեցրել ու դրան մղել «ենիկոլաևյան կազարմայի պետերը», բիրտ ու վայրենի ցարիզմը, պուրիշկևիչներն ու գուչկովները։ Իմպերիալիստական բուրժուազիան ու նրա գրչակները ընդունակ չէին հասկանալու, որ մեծ հեղափոխության դպրոցը կոփել, վերազաստիարակել էր «դարեր շարունակ ճնշված զինվորին», որ նա այժմ արդեն համաձայն չէր թնդանոթի միս դառնալու ի շահ իմպերիալիստական բուրժուազիայի, որ նրանց կամքով նա էլ չէր սպանի իր աշխատավոր եղբորը, որ գիտակից զինվորը պատրաստ էր իր ճանապարհից վերացնելու այն ամենը, ինչ նեխված էր, ինչը խանգարում էր նորի, առաջավորի հաղթանակին։ Այդ ամենի համար էլ նոր զինվորը արժանանում էր բուրժուազիայի ու նրա գրչակների ատելությանը։ Սարիղամիշի բոլշևիկները արտահայտելով զինվորների կամքը՝ գրում էին, որ ամենից

33 Նույն տեղում։
34 Նույն տեղում։

բարձր աղմկող բուրժուազիան պատրաստ է ոչ միայն կանգնեցնելու հեղափոխությունը, այլ մերկացնելու ռազմաճակատը՝ ընդդեմ հեղափոխության։ «Ռիգայի ճակատի ճեղքումը... այդ կլիկի ձեռքի գործն է»[35],— ընդհանրացնում էր «Սոցիալ-դեմոկրատ»-ը։ Բոլշևիկներն անառարկելի փաստերով հիմնավորում էին, որ «հայրենիքի ու հեղափոխության» թշնամիները ոչ թե զինվորներն են, այլ շահագործող դասակարգերն ու նրանց ծառայակամ գրչակները։

Իրենց ողջ գործունեությամբ բոլշևիկները զինվորներին ու բանվորներին նախապատրաստում էին գալիք դասակարգային սուր մարտերի համար։

35 Նույն տեղում։